ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է Քրիստոնյա Արևելքի բաժնի կրտսեր գիտաշխատողի մրցույթ

ՀՀ Կառավարության՝ 2023 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 2298-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է ***Քրիստոնյա Արևելքի բաժնի 0.25 դրույք կրտսեր գիտաշխատողի*** մրցույթ:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի կազմակերպությունում իրականացվող գիտական հետազոտությունների բնագավառին համապատասխան կամ հարակից բնագավառներում գիտական աստիճան կամ մագիստրոսի (դիպլոմավորված մասնագետի) որակավորում,

2) հանդիսանում է Արևելեան Այսրկովկասում էթնո-քաղաքական գործընթացների, ժամանակակից Ադրբեջանի հանրապետության տարածաշրջանային քաղաքականության մասնագետ,

3) տիրապետում է ադրբեջաներենին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ տնօրենի անունով,

2) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

3) ինքնակենսագրություն (CV),

4) լուսանկար 2 հատ,

5) անձնագրի և սոցիալական քարտի կամ նույնականացման քարտի պատճենները,

6) բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի), գիտական աստիճանի դիպլոմի, գիտական կոչման վկայականի պատճենները,

7) հրատարակված գիտական աշխատությունների և/կամ գյուտերի ցանկը (առկայության դեպքում),

8) հավակնորդի նախաձեռնությամբ գիտական գործունեությունը բնութագրող այլ փաստաթղթեր:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել **մինչև 2025 թ. նոյեմբերի 13-ը (ներառյալ) հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 24/4, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, գիտական քարտուղարին, հեռ. +374 10 583382:**